ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1962 Общественные науки

Խ. Հ. Բառայան

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական հաղթանակը մեծագույն ազատագրական նշանակություն ունեցավ ինչպես Ռուսաստանի աշխատավոր դասակարգերի, այնպես էլ Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի, ներառյալ նաև հայ ժողովրդի, վերջնական ազատագրման համար։

«Մենք միշտ բարոզել ենք, և այժմ էլ քարոզում ենք,— գրում է «Կոմունիստ» շաբաթաթերթը հայ ժողովրդին ուղղված կոչում,— որ հայ աշխատավոր ժողովրդի փրկությունը Ռուսաստանի բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանության մեջ է, և ով որ դեմ է խորհուրդների իշխանության հզորությանը, նա դավաճան է, հայ ժողովրդի թշնամին»[1]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո, ինչպես Կովկասյան ռազմաճակատի զորամասերում, այնպես էլ երկրամասի բոլոր գավառներում և քաղաքներում ծավալվում են մասսայական ռևոլյուցիոն շարժումներ, Ռուսաստանի բանվորների և գյուղացիների օրինակով Անդրկովկասում ևս սովետական կարգեր հաստատելու համար։

Բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումների արագ թափով ծավալման հետևանքով 1918 թ. գարնանը Անդրկովկասյան ռեակցիայի սև ուժերը ջախջախվում են Բաքվում ու իշխանությունն անցնում է Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի ձեռքը։

«Բաքվի պրոլետարիատը ձգտում է Անդրկովկասում ստեղծել նոր կառավարություն առանց բեգերի և իշխանների և առանց հայկական նացիոնալիստների, բանվորների և գյուղացիների իշխանություն, սովետների իշխանություն»[2],—նշված է Անդրկովկասի բանվորներին և գյուղացիներին ուղղված Բաքվի ժողկոմխորհի կոչում։

Բաքվի Սովետը հետևողական պայքար է ծավալում բուրժուա-նացիոնալիստական բլոկ հանդիսացող Սեյմի դեմ, Անդրկովկասի բոլոր մասերում Բաքվի օրինակով Սովետական իշխանություն հաստատելու համար։ Այսպիսի պայմաններում է, որ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, երկրամասում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու համար, ժամանակավորապես հրաժարվում են իրենց ներքին տարաձայնություններից, ԱՄՆ-ի և Անտանտայի օգնությամբ, ստեղծում են հակաժողովրդական, հակասովետական կոալիցիա՝ սկզբում Անդրկովկասյան կոմիսարիատը (1917 թ. նոյեմբերի 24-ից 1918 թ. փետրվարի 23-ը), իսկ այնուհետև Անդրկովկասյան Սեյմը, որը բացվում է

1 «Կոմունիստ» շաբաթաթերթ, Մոսկվա, 1918, № 1

1918 թ. փետրվարի 23-ին, երկրամասում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։

ԱՄՆ-ի և Անտանտայի իմպերիալիստների կողմից ստեղծված Անդրկովկասյան Սեյմը, 1918 թ. գարնանը, ժամանակավորապես հրաժարվում է անգլո-ամերիկյան օրիենտացիայից և սկսում է վարել գերմանա-թուրքական օրիենտացիա, որպեսզի գերմանա-թուրքական իմպերիալիստների սվինների օգնությամբ կարողանա ճնշել երկրամասում ծավալվող բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները։ Այդ նպատակի համար էլ հենց Սեյմը «երկրամասը հանձնում է թուրքական նվաճողների ձեռքը»[3]։

Սեյմի քաղաքականության այդ փոփոխությունը նախ և առաջ բացատրվում է նրանով, որ 1918 թ. գարնանը և ամռանը գերմանական խմբավորումը հաջողվում է արևմտյան ռազմաճակատում և Մերձավոր Արևելքում մի շարք լուրջ հաղթանակներ տանել անգլո-ֆրանսիական զորքերի նկատմամբ, հասնելով տակտիկական բավական մեծ հաջողությունների, անգամ վտանգ ստեղծելով Փարիզի նկատմամբ։

Անտանտայի պետությունների համար ստեղծված այդ լուրջ վտանգի պայմաններում, նրանք չեն կարողանում հարկ եղած ռազմական ու տնտեսական օգնություն ցույց տալ Սեյմին, երկրում բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները ճնշելու և նրա տիրապետությունը ամրապնդելու համար։ Որից հետո, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն իրենց հույսը դնում են գերմանա-թուրքական իմպերիալիստական բլոկի վրա, որպեսզի գերմանա-թուրքական իմպերիալիստների սվինների օգնությամբ կարողանան վերջ տալ երկրամասում ծավալվող բանվորա-գյուղացիական շարժումներին, տապալեն Բաքվի Սովետական իշխանությունը և իրենց տիրապետությունը հաստատեն նաև Բաքվում։

Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի, համար ստեղծված այդ ահեղ վտանգի պայմաններում, 1918 թ. ապրիլի 9-ին հրավիրվում է Անդրկովկասյան Սեյմի արտակարգ նիստը, որտեղ քննարկվում է Անդրկովկասի, այսպես կոչված, անկախության և նրա օրիենտացիայի հարցը։ Վրացական մենշևիկների պարագլուխ Չխեիձեն ուղղակի հայտարարում է. «...ավելի լավ է Թուրքիայի գիրկն անցնել, քան բոլշևիկներին հարել»[4]։ Ռասուլ-Զադեն հայտարարում է. «թե անհապաղ հայտարարել Անդրկովկասի անկախությունը»[5]։ Խան Խոյսկին, Ուսուբբեկովն ու մյուսները, նույնպես պահանջում են «...Կովկասը անջատել Ռուսաստանից և թուրքական պրոտեկտորատ հռչակել»[6]։

Ապրիլի 9-ի նիստում հանդես են գալիս նաև դաշնակցության ֆրակցիայի ղեկավարները, որոնք ոչ միայն պաշտպանում են մենշևիկների և մուսավաթականների ֆրակցիաների ղեկավարների առաջարկները, այլև միաժամանակ ավելացնում են. «Քանի որ Անդրկովկասը անջատվել է Ռուսաստանից, անհապաղ պետք է ընդունել թուրքական օրիենտացիա»[7]։

---

2 Документы внешней политики СССР, т. 1, М., 1957, էջ 343—344.

3 Նույն տեղում, էջ 342։

4 Տե՛ս Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1953, էջ 375։

5 «Մշակ», 1918, № 76։

6 Նույն տեղում։

7 «Մշակ», 1918, № 76։

Այսպիսով, Սեյմի բուրժուա-նացիոնալիստական բոլոր պարտիաները, հակառակ ժողովրդի ցանկությանը, միաձայն որոշում են ընդունում Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և գերմանա-թուրքական օրիենտացիա ընդունելու մասին։

Սակայն Սեյմի այդ դավաճանական որոշումը հանդիպում է Անդրկովկասի աշխատավոր մասսաների համառ դիմադրությանը և առաջ է բերում խորը դայրույթ։ Այդ առթիվ Անդրկովկասի մի շարք քաղաքներում և գավառներում՝ Սուխումի, Փոթի, Գորի, Թբիլիսի, Դուշետ, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, Ալեքսանդրապոլ, Ղարս և այլն կազմակերպվում են բողոքի ցույցեր և միտինգներ, որտեղ դատապարտվում է Սեյմի այդ գործունեությունը, միաժամանակ Սեյմը անվանելով «ուղուրպատորների մի շայկա»[8]։

Սովետական իշխանությունը դատապարտելով Սեյմի դավաճանական, հակաժողովրդական գործունեությունը, միաժամանակ հետևողականորեն պաշտպանում է Անդրկովկասի աշխատավոր մասսաների շահերը. «Կովկասի ճակատագրի հարցը,— նշել է այդ մասին Գ. Վ. Չիչերինը 1918 թ. հունիսի 4-ին Սովետների 5-րդ համագումարում,— Բեռլինում հրավիրվող քաղաքական կոմիսիայի օրակարգումն է դրված»[9]։

Սովետական կառավարությունը, Անդրկովկասը Սեյմի կողմից Սովետական Ռուսաստանից «անկախ» հռչակելու առթիվ, 1918 թ. մայիսի 11-ին իր բողոքի նոտան է ուղարկում գերմանական կառավարությանը, որտեղ նշում է. «Անդրկովկասի անջատումը երբեք չի ճանաչվել Ռուսական Սովետական կառավարության կողմից։ ...Արտաքին գործերի կոմիսարիատը այդ առթիվ առաջարկում է, որպեսզի բանակցությունները թուրքական սահմանագլխի մասին տեղի ունենան ոչ այլ ոքի հետ, այլ միայն Ռուսական Սովետական կառավարության հետ»[10]։

Այսպիսին է եղել Սովետական կառավարության դիրքը վերոհիշյալ հարցի նկատմամբ։

Սակայն, հակառակ Անդրկովկասի ժողովուրդների և Սովետական կառավարության ցանկություններին, Անդրկովկասի Սեյմը բանակցություններ է սկսում գերմանա-թուրքական իմպերիալիստների հետ Անդրկովկասը նրանց հանձնելու և նրանց գինված ուժերի միջոցով ռևոլյուցիոն շարժումները ճնշելու պայմանների մասին։

Այդ բանակցություններն սկսվում են Տրապիզոնի, այնուհետև Բաթումիի կոնֆերանսներում։ Բաթումիի կոնֆերանսը սկսվում է 1918 թ. մայիսի 11-ին և վերջանում է հունիսի 4-ին, որտեղ ստորագրվում է դաշնակների և սուլթանական Թուրքիայի միջև «բարեկամության» և «խաղաղության» պայմանագիր։

Բաթումիի պայմանագրի 1-ին հոդվածում նշվում է, որ «Օսմանյան կայսերական կառավարության և Հայկական հանրապետության կառավարության միջև հաստատվում է կայուն խաղաղություն և հարատև բարեկամություն»[11]։

---

8 Документы внешней политики СССР, т. I, М. 1957, էջ 353.

9 Г. В. Чичерин, Статьи и речи по вопросам международной политики, М. 1961, էջ 47.

10 Документы внешней политики СССР, т. I, М. 1957, էջ 285.

11 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. № 11, թ. 99—100։

Պայմանագրի 2-րդ հոդվածը վերաբերվում է երկու պետությունների սահմաններին, որի համաձայն «անկախ» Հայաստանին մնում է ընդամենը 9.000 ք. կ. տարածություն, 6 կմ երկաթուղով, 324.285 բնակիչներով։

Պայմանագրի 4-րդ հոդվածը վերաբերվում է թուրքական կառավարության կողմից դաշնակներին ցույց տրվող ռազմական օգնությանը, Հայաստանում «կարգ» և «կանոն» պաշտպանելու համար. այսինքն՝ ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։

Այդ մասին 4-րդ հոդվածում նշված է հետևյալը.

«Օսմանյան կայսերական կառավարությունը պարտավորվում է զենքի ուժով օգնության հասնել Հայաստանի հանրապետական կառավարությանը այն դեպքում, երբ վերջինս կինդրի այդ մասին երկրում կարգ և հանգստություն ապահովելու համար»[12]։

Այսպիսով, Բաթումիի պայմանագրով սուլթանական Թուրքիայի և դաշնակների միջև ստեղծվում է ռազմա-քաղաքական դաշինք, որն ուղղված էր Հայաստանի աշխատավորական լայն մասսաների կենսական շահերի դեմ։

Պայմանագրի 5-րդ հոդվածում նշվում է, թե «Հայաստանի հանրապետության կառավարությունը պարտավորվում է եռանդով դիմադրել հրոսակախմբերի կազմակերպման և սպառազինման իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել և ցրել այն հրոսակախմբերը, որոնք կգան այնտեղ թաքնվելու»[13]։

Պայմանագրի 5-րդ հոդվածը վերաբերվում է հայկական այն զորամասերին, որոնք ոչ միայն դատապարտում էին դաշնակների դավաճանական, թուրքասիրական քաղաքականությունը, այլև միաժամանակ չէին ենթարկվում դաշնակների կառավարությանը և շարունակում էին պայքարը թուրքական օկուպանտների դեմ (նկատի է առնված հայկական հարվածող զորամասը)։

Դաշնակների կառավարության պատվիրակությունը Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ, 1918 թ. հուլիսի 18-ին շտապ հեռագրում է Երևան, թե «Օսմանյան բանակի Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հայտնել է իր կառավարությանը այն մասին, թե հայկական զորամասերը և առանձին ջոկատներ խանգարում են թուրքական զորքերի տեղափոխումը Սարդարապատից դեպի Ջուլֆա երկաթգծով։ Ուստի խնդրում ենք ամենակտրուկ միջոցները ձեռնարկել թուրքական զորքերի դեմ բոլոր տեսակի թշնամական գործողությունները արագ կերպով լիկվիդացնելու համար»[14]։

Սույն պայմանագրի 11-րդ հոդվածով դաշնակցության կառավարությունը պարտավորություն է վերցնում բոլոր ջանքերը գործադրել հայկական զինված ուժերը Բաքվից դուրս բերելու և Բաքվի գրավումը թուրքերի կողմից արագացնելու համար։

Այդ մասին պայմանագրի 11-րդ հոդվածում նշված է. «Հայկական հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել իր բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո, Բաքու քաղաքից հեռացնի այնտեղ գտնվող հայկական զինվորական ուժերը»[15]։

---

12 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. № 11, թ. 99—100։

13 Նույն տեղում։

14 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 222, գ. 12, թ. 18։

15 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 68/200, գ. № 11, թ. 99—100։

Այսպիսով, դաշնակների պարտիան պարտավորվում է օգնել սուլթանական Թուրքիայի հրոսակախմբերին՝ Սովետական իշխանությունը տապալելու և Բաքվի ուեյուցիոն պրոլետարիատին ընաջնջելու համար։

Այսպես է ստեղծվում դաշնակների և սուլթանական Թուրքիայի միջև ռազմա-քաղաքական դաշինք, որն ուղղված էր հայ ժողովրդի և Բաքվի պրոլետարիատի դեմ։

Բաթումիի պայմանագրի վերջին և միաժամանակ 14-րդ կետը, վերաբերում է պայմանագրի վավերացման ժամկետին, որտեղ նշված է. «Ներկա դաշնագիրը կվավերացվի և վավերացումները կփոխանակվեն Կ. Պոլսում մեկ ամսվա ընթացքում, կամ ավելի շուտ և հնարավորության սահմաններում ուժի մեջ կմտնի այդ փոխանակության օրից»[16]։

Այսպիսով, Բաթումիի պայմանագրով ստեղծված «ազատ» և «անկախ» Հայաստանը դառնում է փաստորեն սուլթանական Թուրքիայի մի պրովինցիան։ Իսկ «ազատ» և «անկախ» Հայաստանի ղեկավարները դառնում են հայ ժողովրդի դահիճներ՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի հյու սպասավորներ։

Բաթումիի վերոհիշյալ պայմանագրից բացի, դաշնակների և թուրքական պատվիրակության միջև ստորագրվում են երեք պայմանագրեր ևս, որոնք վերաբերվում են երկաթուղային սարքավորումները, Հայաստանի խճուղային ճանապարհները թուրքական հրամանատարության տրամադրության տակ դնելուն, որպեսզի թուրքական զորքերը արագ կերպով Հայաստանի տերիտորիայի վրայով շարժվեն դեպի Ադրբեջան և Ջուլֆա։

Բացի դրանից, սույն պայմանագրով «անկախ» Հայաստանի կառավարությունը պարտավորություն է վերցնում Հայաստանի տերիտորիայի վրայով շարժվող թուրքական բանակին մատակարարել պարեն և ֆուրաժ, թուրքական հրամանատարության կողմից սահմանված գներով, բայց փաստորեն ձրի, երբ հայ ժողովուրդը արյունաքամ էր եղել։

Բաթումիի այդ ստորացուցիչ պայմանագիրը ստորագրելուց հետո, դաշնակցության պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը սկզբում է թուրքական պատվիրակության ղեկավար՝ արդարադատության մինիստր Խալիլ բեյի ձեռքը և հայտարարում, թե «Այս փառավոր օրը հանդիսանում է մի նշանավոր տարեթիվ հայ ժողովրդի պատմության մեջ»[17]։

Ալ. Խատիսյանի հայտարարության առթիվ Բաթումիի կոնֆերանսում, գեներալ լեյտենանտ Վեհիբ փաշան պատասխան ճառում հայտարարում է, թե «Հայկական պետությունը մենք համարում ենք մեր երեխան»[18]։

Իսկ Բաթումիից վերադառնալուց հետո, Ալ. Խատիսյանը Թիֆլիսում, Ազգային խորհրդի նիստում իր արտասանած ճառում նշում է, թե «...թուրքերը զարգացած և ճենթլմեն մարդիկ են և Թուրքիո հայերը չեն կրցած անոնց հետ վարվելակերպ ունենալ»[19]։ Այսինքն՝ հայկական ջարդերի պատճառը եղել են իրենք՝ հայերը։

Դեռ մայիսի 28-ին, Հայաստանը սուլթանական Թուրքիայի կողմից «անկախ» ճանաչվելուց անմիջապես հետո, դաշնակցության պատվիրակությունը

16 Նույն տեղում։
17 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 99—100։
18 Նույն տեղում, գ. 74, թ. 37։
19 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 11, թ. 99—100։

անմիջապես հեռագրում է Կ. Պոլիս, ողջունելով սուլթանին, միաժամանակ նշելով. «Ձերդ գերազանցություն, Անդրկովկասի ռեսպուբլիկան քայքայվելուց հետո, Կովկասի Հայկական ազգային խորհուրդը մայիսի 28-ին իր նիստում որոշեց Հայաստանը հայտարարել անկախ պետություն ... Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարությունը պատիվ ունի այդ մասին հաղորդելու Ձերդ գերազանցությանը։ Ընդունեք մեր խորին հարգանքը։ Ահարոնյան, Քաջազնունի, Ալ. Խատիսյան»[20]։

Բաթումիի պայմանագիրը ստորագրելուց հետո. հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան, նախապատրաստվում է «դաշնակից» Հայաստանի վրայով անցնել Գանձակ, դեպի Սովետական Բաքու արշավող թուրքական հրոսակախմբերին հրահանգավորելու համար։ Դաշնակների ղեկավարները մեծ նախապատրաստական աշխատանք են տանում Էնվեր փաշային արժանավայել դիմավորելու և հաճոյանալու համար։

Այդ մասին Բաթումիի կոնֆերանսի պատվիրակությունը անմիջապես հեռագրում է Թիֆլիս, Ազգային խորհրդի նախագահ Ահարոնյանին, որտեղ նշում է. «Սիրելի Ավետիս... մի քանի օրից հետո Էնվեր փաշան գալիս է Ալեքսանդրապոլ, այնտեղից գալու է Գանձակ. իսկ հետո Բաքու։ Լավ կլինի, որ դիմավորեք Ալեքսանդրապոլում և արժանավայել վերաբերմունք ցույց տաք»[21]։

Բաթումիի պայմանագիրը ստորագրվելուց մի քանի օր հետո, երբ դաշնակների կառավարությունը թուրքական զինվորների հովանավորությամբ փոխադրվում է Երևան, հրապարակում է իր դեկլարացիան, որտեղ նշված է. «Ամրացնել օսմանյան կայսրության հետ հաշտություն և բարի-դրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ»[22]։

Այնուհետև շարունակվում է դեկլարացիայում. «Խստիվ կատարել այն բոլոր պարտավորությունները, որ մենք հանձն ենք առել օսմանյան կայսրության հանդեպ»[23]։

Դաշնակների կառավարության այդ դեկլարացիան հրապարակվելուց հետո, «Զանգ» թերթը Բաթումիի պայմանագրի վերաբերյալ խմբագրական հոդվածում գրում է. «Այդ բարեկամության դաշինքով սկիզբ է դրվում մի նոր և ավելի երջանիկ փոխադարձ հարաբերությունների շրջանի... թե՛ Հայաստանի հանրապետության և թե՛ օսմանյան կայսրության միջև»[24]։

Այնուհետև շարունակում է, թե «...այդ բարեկամությունից Թուրքիան շահելու է ոչ պակաս, եթե ոչ ավելի քան Հայաստանը»[25]։

Դաշնակների և սուլթանական Թուրքիայի միջև ստեղծված բարեկամական հարաբերությունների մասին Կ. Պոլսի «Իգդամ» խորագրով թերթը գրում է. «Կհաստատվի այսօր օսմանյան կառավարության և իր զինակիցներուն բարյացակամությամբ Հայկական կառավարություն մը»[26]։

Դաշնակների գլխավորած կառավարության և սուլթանական Թուրքիայի միջև այսպիսի ռազմա-քաղաքական դաշինք ստեղծվելուց հետո, դաշնակների

20 Նույն տեղում, դ. 96, թ. 10։
21 Նույն տեղում, թ. 14։
22 «Զանգ», 1918 թ., № 42։
23 Նույն տեղում։
24 Նույն տեղում, № 43։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում, № 42։

օրգան «Ջանդ» թերթը գրում է հետևյալը. «Հեռու չէ այն օրը, երբ Ռուսաստանը վերջնականապես մաքրված կլինի բոլշևիկներից»[27]։

Սուլթանական Թուրքիայի հետ այդպիսի հարաբերություն է ստեղծվում մենշևիկների և մուսավաթականների կողմից, որոնք կոնֆերանսի ժամանակ հայտարարում են, թե «... Թուրքիայի հետ միշտ բարեկամ ենք եղել և բարեկամ էլ պիտի մնանք»[28]։

Այսպիսին է եղել դաշնակների բարեկամական դիրքը երիտասարդ թուրքերի կառավարության նկատմամբ։ Սակայն Բաթումիի «բարեկամության» պայմանագիրը ստորագրվելուց հետո էլ փաստորեն շարունակվում էր թուրքերի թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Այդ մասին գերմանական օկուպացիոն զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ֆոն Կրեսսը 1918 թ. օգոստոսի 4-ին Թիֆլիսից Գերմանիայի արտաքին գործերի մինիստր գրաֆ Բուրիանին ուղարկած զեկուցագրում ուղղակի նշում է, թե «Թուրքիայի քաղաքականությունը պարզ է։ Թուրքերը տրամադրություն ունեն բնաջնջելու հայերին։ Հայերին հետապնդում են որտեղ որ հնարավոր է, պրովակացիայի ենթարկում և առիթներ են փնտրում նոր հարձակումների համար»[29]։

Սակայն, այդ բոլորից հետո, դաշնակների ղեկավարները մինչև այսօր էլ դեռ փառաբանում են Բաթումիի կողոպտիչ այդ պայմանագիրը, նշելով «Փառք Հայաստանի անկախության լուսապայծառ թվականին, 1918 թ. մայիսի 28-ին»[30]։

Բաթումիի պայմանագրից հետո, դաշնակների կառավարությունը կազմում է 7 հոգուց բաղկացած մի պատվիրակություն՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ Կ. Պոլսի կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու համար, որտեղ պետք է վավերացվեր Բաթումիի պայմանագիրը գերմանա-թուրքական բլոկի պետությունների կողմից։

Դաշնակցության պատվիրակությունը մինչև Կ. Պոլսի կոնֆերանսի բացումը մի շարք հանդիպումներ է ունենում սուլթանի և թուրքական կառավարության ղեկավարներ՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի հետ։ Պատվիրակության անդամները այդ հանդիպումների ժամանակ մի շարք ստորաքարշություններ են անում թուրքական կառավարության ղեկավարների առջև։

Հունիսի 21-ին պատվիրակությունը ընդունվում է Թալեաթ փաշայի կողմից։ Այդ ընդունելության ժամանակ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը, դաշնակցության պարտիայի և կառավարության անունից հետևյալ ճառն է ասում. «Ձերդ գերազանցություն, կվստահացնենք Ձեզ, որ Թուրքիո հայերու վիճակը մեզ երբեք չեն շահագրգռել։ Մենք եկանք միայն խորհրդակցելու համար Կովկասյան հայերու հանրապետության մասին և որոշելու համար մեր սահմանները ու դիրքը, մեր զորավոր դրացին և պաշտպան եղող Օսմանյան պետության հետ, որու բարեկամական հակումները մենք տեսանք Բաթումում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ»[31]։

---

27 Նույն տեղում, № 78։

28 «Ջանդ», 1918, № 78։

29 Dr. Johannes Lepsius, Deutschland und Armenien 1914—1919, Potsdam, 1919, էջ 424—425։

30 «Հայրենիք», 1955 թ. մայիսի 28, № 1305, Բոսթոն։

31 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 13, թ. 21։

Այնուհետև շարունակում է. «նախ և առաջ մենք կուզենք համաձայնության գալ մեր զորեղ դրացի՝ Օսմանյան պետության հետ, որուն սահմանակից ենք, որմե շատ օգնություններ կստանանք»[32]։

Թալեաթ փաշան դաշնակցական կառավարության պատվիրակության այդպիսի հարցադրման առթիվ հետևյալ պատասխանն է տալիս. «Դուք միշտ հավատարիմ եք եղել Թուրքիային և միայն վերջին ժամանակներս շնորհիվ եվրոպական պետությունների դրդումների անցաք Թուրքիայի թշնամիների կողմը... Բայց այժմ հանգամանքները բոլորովին փոխվել են և ձեռնարկած միջոցներն էլ ըստ որում հիմնովին պիտի փոխվեն»[33]։ Այսինքն՝ նախկին գործարքը նորից պետք է վերականգնվի։

Դաշնակցության պատվիրակության անդամները մյուս օրը՝ հունիսի 22-ին, ընդունվում են հայ ժողովրդի մյուս դահիճ՝ Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշայի կողմից, որտեղ ևս ստորաքարշություններ են անում։ Ավետիք Ահարոնյանը Էնվեր փաշայի մոտ արտասանած ճառի ժամանակ աղերսում է Էնվերին, որպեսզի «Թուրքիան հանձն առնի ապահովելու դաշնակիցների միջոցով (խոսքը Թուրքիայի դաշնակիցների մասին է —Խ. Բ.) որպեսզի Ռուսաստանը չառարկի Հայաստանի անկախության դեմ»[34]։ Այսինքն՝ Թուրքիան և իր դաշնակիցները հարկադրեն Ռուսաստանին, որպեսզի նա հրաժարվի Անդրկովկասից և Հայաստանից։

Դաշնակցության ղեկավարները Թալեաթի և Էնվերի մոտ արած ստորաքարշությունների ժամանակ այնքան են հեռու գնում, որ մինչև անգամ առաջարկում են Բաթումիի «բարեկամության» պայմանագրով ստեղծված «ազատ» և «անկախ» Հայաստանը, որն ունեցել է ընդամենը 9.000 ք. կ. տարածություն, որի պետական սահմանն անցնում էր Նորագավիթ գյուղի մոտով և Էջմիածնի մատույցներով, մտցվի օսմանյան կայսրության մեջ կոնֆեդերացիոն կապերով։

Այդ մասին հայտնում է դաշնակցական պատվիրակության գործերի կառավարիչ և բարտուղար Հակոբ Քոչարյանը իր հուշատետրում։ Նա գրում է, որ սեպտեմբերի 13-ին, երեկոյան ժամը 9,30-ին տեղի ունեցավ պատվիրակության 22-րդ նիստը Ա. Խատիսյանի նախագահությամբ և Հ. Քոչարյանի բարտուղարությամբ[35]։ Այդ նիստում ի թիվս այլ հարցերի որոշվել է.

«Թուրքիայի սահմանները ապահովելու համար Ռուսաստանի կողմից պետք է Թուրքիայի հետ կապվի և նրա կազմի մեջ մտնի կոնֆեդերացիոն կապերով ամբողջ ավտոնոմ Հայաստանը»[36]։

Դեռ դրանից առաջ թուրքական «Իզդամ» խորագրով կենտրոնական թերթը, 1918 թ. հունիսի 30-ին, 7684 համարում արտատպում է թուրքական կառավարության ղեկավարների և դաշնակների պատվիրակության անդամների նկարները, միաժամանակ գրելով հետևյալը. «Մեր քաղաքում գտնվող Կովկասյան հայ հանրապետության լիազոր պատվիրակությունը, որի կազմում են նախագահ Ահարոնյանը, Ա. Խատիսյանը, Գ. Խատիսյանը, Հակոբ Քոչարյանը, Բու-

32 Նույն տեղում։
33 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 13, № 1։
34 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 23, թ. 75։
35 Նույն տեղում, էջ 79։
36 Նույն տեղում։

նիությանը և զորավար Կորղանովը իրենց թուրք առաջնորդներու և հյուրասիրողներու հետ»[37]։

Հուլիսի 11-ին դաշնակցության պատվիրակության անդամներն այցելում են սուլթանին, նրան ողջունելու և առողջությունը հարցնելու, Բայրամը շնորհավորելու համար։ «Ընդունելությունը եղավ շատ սիրալիր»[38],— գրում է դաշնակցություն պարտիայի հիմնադիրներից մեկը՝ պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանը, իր հուշատետրում, որը պահվում է մինչև այժմ Պետ. արխիվում։

Պատվիրակության ղեկավար Ահարոնյանը դաշնակների կառավարության անունից ողջունելով թուրքական սուլթանին, հայտարարում է. «Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, որ Օսմանյան կառավարությունը առաջինն էր, որ առաջ քաշեց Հայաստանի անկախության իդեան և նրա ճանաչումը»[39]։

Թուրքական սուլթանը իր հերթին ողջունելով դաշնակցության կառավարության պատվիրակությանը, միաժամանակ ավելացնում է, թե ինքը «Արտակարգ ուրախ է, երբ իր մոտ է տեսնում ազատ և անկախ Հայաստանի ներկայացուցիչներին, որին ցանկանում է ոչ միայն բարգավաճում, այլև ուժեր իր անկախությունը պաշտպանելու համար»[40]։

Այսպիսին է եղել դաշնակների թուրքասիրական քաղաքականությունը Կ. Պոլսի չկայացած կոնֆերանսի շրջանում։

Դաշնակցության պատվիրակությունը Կ. Պոլսում մնում է մի քանի ամիս (հունիսի 21-ից սեպտեմբերի վերջը)։ Այդ ժամանակամիջոցում պատվիրակությունը ունենում է մի շարք նիստեր, որտեղ քննարկվում են զանազան հարցեր, գլխավորապես դաշնակցության կառավարության և Թուրքիայի փոխհարաբերության հարցերը։

Կ. Պոլսի կոնֆերանսը, որտեղ գերմանական խմբավորման պետությունների կողմից պետք է վավերացվեր Թուրքիայի և Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների միջև Բաթումիում ստորագրված «բարեկամության» պայմանագրերը, տեղի չի ունենում։

Կ. Պոլսի կոնֆերանսի ձախողումը ունեցել է մի քանի լուրջ պատճառներ։

Դրանցից էին Գերմանիայի և Թուրքիայի միջև Անդրկովկասը ազդեցության ոլորտների բաժանելու հարցում առաջացած հակասությունները։

Գերմանական կառավարությունը դեմ էր, որպեսզի Թուրքիան խախտի Բրեստի պայմանագիրը և ներխուժի Անդրկովկաս։ Գերմանիան ձգտում էր միակողմանի կերպով Անդրկովկասի օկուպացմանը։ Գեներալ Լյուդենդորֆը 1918 թ. հունիսի 8-ին գերմանական գլխավոր շտաբի անունից հետևյալ բողոքն է ուղարկում գեներալիսիմուս Էնվեր փաշային, նշելով՝ «Գերմանական կառավարությունը իր բողոքն է հայտնում այդ առթիվ, միաժամանակ նշում այդ վարքագծի ծանր հետևանքների մասին»[41]։

Այդ պատճառով էլ գերմանական պատվիրակությունը չի մասնակցում Բաթումիի կոնֆերանսին։ Ընդհակառակը՝ գերմանական պատվիրակությունը Ֆոն

---

37 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 23, թ. 3։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում, ֆ. 222, գ. 12, թ. 208—209։

40 Նույն տեղում։

41 Dr. Johannes Lepsius, Deutschland und Armenien 1914—1918. Potsdam, 1919, էջ 399։

Լոսովի գլխավորությամբ դեմոնստրատիվ կերպով հեռանում է Բաթումիի կոնֆերանսից։ Դրանից հետո, 1918 թ. օգոստոսին գերմանական գլխավոր շտաբում քննվում է Անդրկովկասի հարցը։ Այդ նիստում գեներալ Լյուդենդորֆի առաջարկությամբ ընդունվում է հետևյալ դեկրետը, թե «Վրաստանի հետ բանակցությունները վերջացել են (այսինքն՝ Գերմանիայի տիրապետությունը հաստատվել է Վրաստանում — Խ. Բ.), հերթը հասել է Հայաստանին, Ադրբեջանին և Հյուսիսային Կովկասին»[42]։

Այնուհետև նշում է. «Հայաստանի և Ադրբեջանի համար Թուրքիայի հետ ստորագրած պայմանագիրը պետք է փոխարինվի նոր պայմանագրով, որի հիման վրա, այդ նոր պետությունների և քառյակ դաշնակիցների միջև պետք է հաստատվի տնտեսական և քաղաքական նոր հարաբերություններ»[43]։

Գերմանական կառավարությունը այդ նույն կարծիքը հայտնում է նաև Բեռլինում գտնվող դաշնակցության կառավարության ներկայացուցիչներին, թե «Բաթումիում միայն Թուրքիայի հետ ստորագրած պայմանագիրը, առանց մյուս դաշնակիցների, չի կարող ճանաչվել Գերմանիայի և նրա մյուս դաշնակիցների կողմից»[44]։

Այս բոլոր փաստերը վկայում են այն մասին, որ գերմանական իմպերիալիստները բոլոր միջոցները գործադրեցին թուրքական իմպերիալիստներին Անդրկովկասից վռնդելու և իրենց տիրապետությունը հաստատելու համար։

Կ. Պոլսի կոնֆերանսի չկայանալու մյուս գլխավոր պատճառը դա Սովետական Ռուսաստանի պայքարն էր՝ Անդրկովկասից դուրս վռնդելու համար թուրքական իմպերիալիստներին, որոնք փաստորեն վարում էին պանթուրքական քաղաքականություն ոչ միայն Անդրկովկասի, այլև Միջին Ասիայի նկատմամբ։ Սովետական կառավարությունը այդ առթիվ բազմաթիվ բողոքի նոտաներ է ուղարկում թուրքական կառավարությանը և կտրուկ կերպով պահանջում է թուրքական կառավարությունից զորքերը դուրս տանել Անդրկովկասի սահմաններից։

Սովետական կառավարության հանձնարարությամբ, Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Վ. Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 20-ին նոր բողոքի նոտա է ուղարկում թուրքական կառավարությանը, որտեղ նշվում է, թե «Ռուսաստանի Սովետական ֆեդերատիվ սոցիալիստական ռեսպուբլիկայի կառավարությունը հարկադրված է գտնելու, որ Օսմանյան կառավարության գործողությունները փաստորեն ոչնչացրել է Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը, որով հաստատվել էր խաղաղ հարաբերություններ այդ երկու պետությունների միջև»[45]։

Սովետական կառավարության այդ նոտայից հետո թուրքական կառավարությունը հարկադրված է լինում բանակցություններ սկսել Սովետական կառավարության հետ Անդրկովկասի նկատմամբ առաջացած կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար։ Բանակցություններն սկսվում են 1918 թ. սեպտեմբերի 21-ին Բեռլինում Թալեաթ փաշայի և Սովետական կառավարության դիվանագիտական ներկայացուցչության միջև։ Թուրքական կառավարու-

---

[42] Dr. Johannes Lepsius, Deutschland und Armenien 1914—1918, Potsdam, 1919. էջ 409—410։

[43] Նույն տեղում։

[44] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 222, դ. 11, թ. 26—27։

[45] ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, դ. № 17, թ. 58—59։

թյան ներկայացուցիչները հարկադրված են լինում ընդունել Սովետական կառավարության առաջարկությունը՝ թուրքական զորքերը Բաքվից և Անդրկովկասից դուրս բերելու, մինչև Բրեստ-Լիտովսկու պայմանագրով նախատեսված սահմանը։

Թալեաթը այդ բանակցությունների ընթացքում միաժամանակ հայտարարում է, թե. «Թուրքիան ոչ մի մտադրություն չունի խառնվելու Կովկասյան գործերին, մտադիր չէ իր տերիտորիան ընդարձակել Կովկասի հաշվին և անհապաղ կհեռացնի իր զորքերը Անդրկովկասից»[46]։

Սակայն Թալեաթ փաշան կոնկրետ կերպով չի նշում, թե թուրքական զորքերը Անդրկովկասից դուրս բերելուց հետո այդ տերիտորիաները կհանձնեն Սովետական Ռուսաստանին, թե ոչ։

Ընդհակառակը, թուրքական կառավարության ղեկավարները, Թալեաթ փաշայի գլխավորությամբ, գաղտնի բանակցություններ են սկսում Անտանտայի պետությունների հետ, իրենց զորքերը Անդրկովկասից հեռացնելուց հետո Անդրկովկասը նրանց հանձնելու մասին, որը տեղի է ունենում 1918 թ. աշնանը, Թուրքիայի և Անտանտայի միջև Մուդրոսի զինադադարը ստորագրելուց հետո։

Գերմանա-թուրքական օկուպացիոն զորքերը Անդրկովկասից հեռանալուց անմիջապես հետո, անգլո-ամերիկյան գաղութարարները՝ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների աջակցությամբ, օկուպացնում են Անդրկովկասը։

Հրաժարվելով թուրքա-գերմանական գրկախառնումից, Անդրկովկասի ժողովուրդների թշնամիները այս անգամ գրկախառնվում են Անտանտայի իմպերիալիստների հետ, և նրանց օգնությամբ պահպանում իրենց արյունոտ տիրապետությունը — դաշնակցական, մենշևիկյան ու մուսավաթական բռնապետությունները։ Ոչ միայն արյունաքամ են անում Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներին՝ բաշիբուզուկային թալանի ու շահատակության միջոցով, այլև տրահրում են հայ-ադրբեջանական, հայ-վրացական արյունահեղ պատերազմներ, ճնշելով այդ ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրման ձգտումները և իրենց կարճատև, կեղտոտ տիրապետության ընթացքում արյան մեջ խեղդում Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի աշխատավորության ռևոլյուցիոն ընդվզումները։

Աշխատավորների այդ ցասումից ահարեկված դաշնակները իրենց նոր տերերի հորդորներով արյան մեջ խեղդեցին Հայաստանի Մայիսյան ապստամբությունը։

Իսկ երբ «բարեկամ» Թուրքիան 20-ական թվականներին պատրաստում էր իր նոր արշավանքը Հայաստանի վրա, և Սովետական Ռուսաստանը իր օգնությունն էր առաջարկում՝ Թուրքիայի ներխուժման դեմ, դաշնակցականները մերժեցին այն։ Իսկ երբ ապստամբությամբ իշխանությունն իրենց ձեռքը վերցրած Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ փրկեցին հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից — դաշնակցությունը նորից նետվեց թուրքական զավթիչների գիրկը՝ Ալեքսանդրապոլի դեմտեմբերի 2-ի իր պայմանագրով՝ թուրքական յաթաղանը հռավիրելով՝ հայ ազատագրվող ժողովրդի իշխանության դեմ։

---

46 «Կոմունիստ» շաբաթաթերթ, 1918, № 9, էջ 14։

Հայաստանը և հայ ժողովրդին Թուրքիայի բարբարոս տիրապետության վասալը դարձնելու ստոր պայմանագրով հիմնադրեց դաշնակցությունն իր արյունոտ տիրապետությունը հայ ժողովրդի վրա և նույն Թուրքիայի օգնությամբ փորձեց խանգարել հայ ազատագրված ժողովրդի անկախությունը դեկտեմբերի 2-ի իր կեղտոտ պայմանագրով։

Իր «պետականության» թե՛ ստորոդի սկզբնավորման և թե՛ նույնքան ստոր ու վերջնական ավարտի պահին դաշնակցությունը գործակից էր դարձել հայ ժողովրդին բնաջնջող բարբարոս պանիսլամիզմի քաղաքականությունն իրականացնողների հետ և առանց ամոթի ու լկտիարար շարունակում է մեծարել իր այդ չարագործությունների արդյունքը հանդիսացող իրը թե, «անկախ հանրապետությունը»՝ Բաթումիի դաշնագրով ստեղծված «հանրապետություն» խրտվիլակը։